

զաղութեան արշալոյսը բացուի ընդարձակ Ռուսաստանի վրայ, որի ամենատանջուած զաւակներն ենք և մենք և որը դարերի ընթացքում սիրելի մայր էր բոլորիս համար՝ մինչև Գալիցինների և Լօբանովների խելացնոր քաղաքականութիւնն ու նրանց սերմանած որումը, որը և այսուհետեւ մեզ համար կը մնայ նոյնը և ազատութեան, արդարութեան և հաւասարութեան սպեղանիով կը բուժի իւր քնարելագոյն զաւակների արիւնածոր վէրքերը:

Ե. Ճ. Վ. Մ.

ՓՐԿՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Աշխարհի փրկչի ծնուելու ժամին՝
Մի աստղ պայծառ ու նորանշան
Փայլում էր խիստ ջինջ աստղերի միջին,
Ամենքի ուշք, միտք դրաւում իրան։

Յանկասէր, հպարտ, բռնակալ մոգեր
Արքայորդու աստղ կարծեցին նրան.
Ուրախակցելու, տալու ընծաներ
Աշխարհի երեք ծայրերից եկան։

Արքունի շքեղ պալատի տեղակ՝
Բեթղեհեմից դուրս այր գտան մթին.
Այս այրի տիսուր կամարների տակ՝
Պատսպարւում էր հովիւն հետ հօտին։

Այրի անկիւնում տեսան մի մանուկ.
Որրանը՝ մսուր խանձարուրը՝ յարդ.
Տեսան կուչ եկած մի մարդ խեղճ, ծերուկ,
Մի կին գեղեցիկ, քնքոյշ որպէս վարդ։

Զըկար արդ ու զարդ, զըկար ծիրանի,
Աչ շքեղութիւն, ոչ փառք արքունի։

Աստղի ցոյց տուած նորածնի դիմաց՝
Գոռող մոգերը կանգնեցին ապշած։

«Սա է, ասացին, արքան նորածին»։

Եւ խոնարհութեամբ չոքեցին գետին։—

Ընծաներ պէսապէս և խիստ թանկագին

Մանուկ թիսուսի առաջը դրին։

Փայլում էր ոսկին արևի նման,

Կնդրուկը բուրում, բոյր անմահական։

Ոչ փայլը ոսկու, ոչ բոյրն կնդրկին

Զը հրապուրեցին Մանուկ թիսուսին։

Մանուկ թիսուսը դէմքը շուռ տուեց,

Սուրբ սէր, հեզութիւն և գութ պահանջեց։

Իմաստուն մոգերն աչքերը յառած

Մանուկ թիսուսի կանգնեցին դիմաց։—

Ցանկասէրն ուխտեց թողնել մոլի սէր։

Ընկերին միայն սուրբ սիրով սիրել։

Հպարտը ուխտեց լինել հեղ, խոնարհ,

Խրանից խեղճին չանել ոտնահար։

Բոնակալն ուխտեց գթոտ հայր լինել,

Բոնութիւն, զրկանը բնաւ ըլ գործել։

Այս խոստումներով մոգերը կրկին

Փրկչի առաջին գետին չոքեցին,

Նրանց խոստումը Փրկիչն ընդունեց,

Նոյնը աշխարհին քարողել խնդրեց։

Քարողն խօստում է ուղիղ քսան դար,

Բայց անցնում է այն զուր և վայրապար,

Մարդիկ մնում են ցանկասէր, հպարտ

Եւ բիրտ ու անդութ բոնակալ՝ մինչ ցարդ։